ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Միեր Ալավերդյանը, Անուշավան Ավետիսյանը, Վաչե Խաչատրյանը, Արթուր Կարապետյանը, Գնել Ղազարյանը, Գրիշա Ղազարյանը, Նարինե Սմբատյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հուսիկ Սահակյանը

Նիստը արձանագրում էր՝ ը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 21-ը օգոստոսի 2025 թվականի թիվ 11 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 21-ը օգոստոսի 2025 թվականի թիվ 11 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի «Ջոն և Հասմիկ Մկրտիչյաններ Արենիի մանկապարտեզ», «Արենի համայնքի Ռինդ բնակավայրի մանկապարտեզ», «Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատության Խաչիկ մասնաճյուղում ավագ խումբ ձևավորելուն համաձայնություն տալու մասին:

3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից սահմանափակ օգտագործելու իրավունքով (սերվիտուտ) օգտագործման տրամադրելու մասին:

4. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,06 հա հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

5. Արենի համայնքի ղեկավարի օգնական Ռոման Բաղդասարյանի գրությունը քննարկելու և իր սեփական ՎԱԶ 212140 մակնիշի ավտոմեքենայի համար 4 հատ նոր անվադող տրամադրելու մասին:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 110-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋՈՆ և ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏԻՉՅԱՆՆԵՐ ԱՐԵՆԻԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, «ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԱՐԵՎԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽԱՉԻԿ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԱՎԱԳ ԽՈՒՄԲ ՁԵԱՎՈՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հիմք ընդունելով «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը և 3-րդ մասը և վերոնշյալ մանկապարտեզների կանոնադրությունների 30-րդ կետը, Ավագանին որոշում է

Տալ համաձայնություն՝

1. Արենի համայնքի «Ջոն և Հասմիկ Մկրտիչյաններ Արենիի մանկապարտեզ»,«Արենի համայնքի Ռինդ բնակավայրի մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություններում և «Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատության Խաչիկ մասնաճյուղում ավագ խումբ ձևավորելելուն:

2. Ավագ խմբում 6 տարեկան երեխայի ուսուցումն ու զարգացումը կազմակերպել մինչև տվյալ տարվա օգոստոսի 20-ը՝ անկախ երեխայի 6 տարեկանը լրանալուց:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 111-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏՈՎ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-213 հոդվածների, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի տնօրեն՝ Ռ.Խաչատրյանի առաջարկը. Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հողամասերում համապատասխան հետազոտությունների, անտառհիմնման ու բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով՝ Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, սույն որոշման հավելված 1-ով ներկայացված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքները, 5 (հինգ) տարի ժամկետով, անհատույց, սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտով) տրամադրել Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին:

2. Սերվիտուտով տրամադրված տարածքներում գտնվող խմելու և ոռոգման ջրի ջրաղբյուրները ինչպես նաև ջրագծերը ամբողջությամբ վերահսկվում են Արենիի համայնքապետարանի կողմից:

3. Սույն որոշմամբ տրամադրված հողատարածքներում իրականացվող ծրագրերի արդյունավետությունից և անհրաժեշտությունից ելնելով հետագայում վերանայել տրամադրման ժամկետը:

4. Արենի համայնքի բնակիչները իրավունք ունեն անարգել օգտվել հատկացված տարածքներից՝ խոտհնձի, խոտաբույսերի հավաքման և համատեղ համաձայնեցված այլ նպատակներով:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 112-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,06ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջնով և հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 14-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետը, ՀՀ Կառավարության 29.12.2011 թվականի թիվ 1920-Ն որոշումը և ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 13.08.2025 թվականի թիվ 2/փ-252 դրական եզրակացությունը՝ որոշում եմ.

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արթուր Սողոմոնի Սողոմոնյանի սեփականություն հանդիսացող 0,06 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝ վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 10-008-0265-0113) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 113-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՌՈՄԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ՆԻՎԱ ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ 4 ՀԱՏ ՆՈՐ ԱՆՎԱԴՈՂ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հարգել Արենի համայնքի ղեկավարի օգնական Ռոման Բաղդասարյանի գրությունը և իրեն սեփականության իրավունքով պատկանող ՎԱԶ 212140 մակնիշի 37DJ010 պետհամարանիշի ավտոմեքենայի համար հատկացնել 4 հատ նոր անվադող:

2. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 114-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գևորգ Սիմոնյանը

_____